Պարկապզուկ

Ժողովրդական փողային նվագարան է (անվանվում է նաև *պարկապկու, փիկ*)։ Բաղկացած է կաշվե պարկից, օդը մղելու փողրակից և եղեգե մի քանի նվագափողից։ Պարկապզուկի նվագափողը Հայաստանում անվանում են **պզուկ** կամ **պկու**։ Այստեղից էլ նվագարանի անվանումը։

Պարկապզուկի նվագափողերից մեկը կամ երկուսն առանց ձայնանցքերի են, այսինքն՝ ավելի թավ ձայն են արձակում և ապահովում են դամը։

Պարկապզուկը պատրաստված է այծիկի, հորթուկի կամ ոչխարի կաշվից, որը ժողովրդի մեջ անվանվում է «տիկ»։

Նվագողը նախապես օդով լցված և թևատակին դրած պարկը սեղմում է սեփական մարմնին, պարկի օդն անցնում է նվագափողերով։

Պարկապզուկը ժողովրդական տոնակատարությունների ոգին է, լարախաղացների ուղեկիցը։ Իր զիլ ձայնով ազդարարել է լարախաղացի ելույթը, հավաքել ժողովրդին ու զվարճացրել մարդկանց՝ գետնի վրա լարախաղացին ընդօրինակող նվագածուի ծաղրական պարով։ Իրենց նվագուխաղով լարախաղացն ու պարկապզուկահարը շրջել են գյուղից գյուղ, քաղաքից քաղաք՝ մեծ ոգևորություն և ուրախություն պատճառելով ամենքին։

Աշխարհում ամենատարածված ժողովրդական նվագարանն է, տարբերվում է տիկի տեսքով, փողերի քանակով, տարբեր հնչյունաշարերով և այլն։